

ՇՈՒԾԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ

**ՀՀ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր զիտաշխատող**

ՀՀ ԶԱՐԿՎՅԻ ԵՎ ՄԱՔՍԱՅԻ ՄԱՐՄԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Տնտեսվարման ներկա փուլում Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է ստվերային տնտեսության կրծատման, հարկային ու մաքսային կարգապահության բարձրացմանն ուղղված վարչարության միջացառումների իրականացումը և դրանց արդյունքում թափանցիկության և հաշվետվողականության ապահովման ուղիների մշակումը:

ՀՀ-ում հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ուղիները ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ հարկային համակարգի բարեփոխումների իիմնական ուղղությունները, որոնք իրենց էությամբ բավականին բարդ գործընթացներ են և պահանջում են ինչպես միջոցներ, այնպես էլ ժամանակ: Այդ բարեփոխումների սկզբնական փուլում դրական արդյունքները, որոնք կարող են արտահայտված լինել տնտեսական այնպիսի ցուցանիշներում, ինչպիսիք են արտադրության մակարդակը, ներդրումները կամ տնտեսական աճը, անմիջապես ի հայտ չեն գալիս, և դա այն դեպքում, եթե ծախսերը այդ գործընթացի մշտական ուղեկիցներն են:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ տնտեսության առկա դիմամիկայի և հարկային ու մաքսային համակարգի զարգացման հարաբերությունները մեծապես չեն համապատասխանում կառուցվածքային, ինստիտուցիոնալ, ինչպես նաև ֆինանսական հատվածներում փոփոխաբերությունների զարգացմանը: Այս թերություններին գրունթաց հարկային ու մաքսային համակարգն ունի նաև ներքին հակասություններ՝ կապված ներքին կառուցվածքի իրական դերի և նշանակության անհամապատասխանության հետ, որոնք ել հանգեցնում են հարկային և մաքսային մարմինների գործունեության անկատարելիությանը:

ՀՀ հարկային համակարգի հիմնախնդիրները խմբավորված են երկու հիմնական խմբերում՝

- հարկային համակարգի ներքին հիմնախնդիրներ,
- տնտեսության կառուցվածքային հիմնախնդիրներ:

Հարկային համակարգի ներքին հիմնախնդիրները ներառում են.

1. անուղղակի հարկերի գերակշռումն ուղղակի հարկերի նկատմամբ, որը ցածր եկամուտների պարագայում բերում է եկամուտների վերաբաշխման անհավասարության,

2. սեփականության ինստիտուտի անկատարության ու անպաշտպանվածության հետևանքով ՓՄՁ սուբյեկտների միջև հարկային բերի անհավասարաշափ բաշխումը,

3. հարկման մեխանիզմների խաչաձևածությունը և, որոշ դեպքերում, միևնույն օբյեկտի բազմակի հարկումը,

4. հարկման անարդարացիությունը, հարկային բերի անհավասարաշափ բաշխումը, ինչը բերում է տնտեսության մեջ ստվերայնության մակարդակի աճին և հարկային համակարգի նկատմամբ վստահության անկման,

5. հարկային վարչարության միակողմանիության, անարդյունավետության և հարկային մարմիններում կոռուպցիայի առկայությունը:

Հատկապես վերջին երկու բացասական ազդեցություններն իրենց հերթին բերում են տնտեսության մեջ տնտեսվարող սուբյեկտների գործունեության, շրջանառության ծավալների և եկամուտների՝ հարկային դաշտից դուրս գալուն, հետևաբար և հարկային մուտքերի նվազմանը:

¹ Տ. Վ. Հարությունյան, Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում Երևան, 2016, էջ 257:

Հաջորդ խմբում արտացոլված են տնտեսության կառուցվածքային զարգացման հիմնախնդիրները, որոնց հիմքում ընկած է անարդյունավետ հարկային համակարգը և տնտեսական զարգացումների հետ չհամաձայնեցված հարկային քաղաքականությունը: Այստեղ կարևորվում են հետևյալ հիմնախնդիրները:

1. միջանկյալ շրջանառության կամ արտադրական գործընթացների հաջորդական փուլերում հարկման բարձր մակարդակը,

2. հումքային և անավարտ արտադրանքի արտահանման շրջանառության հարկային արտոնությունները,

3. ներքին շուկայում չարտադրվող և մոտ ապագայում արտադրություն ծավալելու միտումներ հանդես բերող ապրանքների ու ծառայությունների ներմուծման հարկման բարձր մակարդակը, որը հանգեցնում է տնտեսության կառուցվածքի կայացման և զարգացման երկու հիմնարար գործոնների խաթարմանը: Դրանք են՝

ա) միջայուղային գործընթացների ակտիվացումը, արտադրության ապրանքայնության աճը և սրանց միջոցով հավելյալ արժեքի ստեղծման ինտենսիվության աճը,

բ) հարաբերական առավելությունների պահպանումը և տնտեսության կողմից դրանց ամբողջական յուրացումը:

Այս երկու գործոնների բացակայության հետևանքներն են ՀՀ-ում տնտեսության տարբեր հատվածներում շահութաբերության շարունակական անկումը, ինտեգրացիայի և կապիտալիզացիայի ցածր մակարդակը, ինչպես նաև անընդմեջ աճող արտաքին առևտրային պակասուրդն իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Բացասական ազդեցությունների այս շղթան ՀՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական հանգամանքն է: Եթե անզամ հարկային վարչարարության և հարկման սկզբունքները, որոնք շարադրված են հիմնախնդիրների առաջին խմբում, ենթակվեն հիմնարար բարելավման, ապա դա բավարար չի լինի այս խմբի հիմնախնդիրների լուծման համար, ինչը կարող է թեկուզ բերել վատահելի հարկային համակարգի առկայության դեպքում տնտեսական աճի երկարաժամկետ դանդաղեցման և, անզամ, տնտեսության ցնցման երևույթների:

ՀՀ-ում անընդմեջ իրականացվում են հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկությանն ու հաշվետվողականությանն ուղղված աշխատանքներ, այդ թվում՝ «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործունեության համառոտագիրը», որտեղ ներկայացվել են նոր ընդունված իրավական ակտերը և դրանց հակիրճ մեկնաբանությունները: ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվում են հասարակական հետաքրքրություն ունեցող օրենսդրական ակտերի նախագծերը, գործող օրենսդրական ակտերը, հաշվետվությունների ձևաթղթերը և հարկ վճարողների իրազեկման համար նախատեսված այլ տեղեկատվություն¹: Մաքսային ծառայության պաշտոնական կայք էջում ևս տեղադրվել և շարունակվում են տեղադրվել բազմաթիվ նորություններ, ինչպես նախագծերի, այնպես էլ միջազգային իրադարձությունների վերաբերյալ²: Շարունակում է աճել ՀՀ ֆինանսների նախարարության հարկ վճարողների հեռախոսազնգերի սպասարկման կոնտրոնի կողմից հեռախոսակապով և կեկտրոնային եղանակով տրամադրվող պարզաբանումների թվաքանակը: Հարկային և մաքսային մարմինների կողմից ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով 2012թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կազմում ձևավորվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ներքին առդիսի վարչությունը, հաստատվել են վարչության գործառույթները, անձնակազմի պաշտոնական անձնագրերը և «ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին առողջապահության կանոնակարգը»:

2017թ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն մշակել է վարչարարության ծրագիր, որին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել հոկտեմբերի 6-ի նիստում: Ուղենչային այդ փաստաթղթով սահմանվում են այն հիմնական ուղղություններն ու միջոցառումները, որոնց հիման

¹ ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայք էջ <http://taxservice.am/>

² ՀՀ Մաքսային ծառայության պաշտոնական կայք էջ <http://customs.am/>

վրա առաջիկայում պետք է իրականացվեն եկամուտների ապահովման վարչարարական աշխատանքները:

Եկամուտների վարչարության բարելավման միջոցառումները կոչված են ընդլայնել հարկային և մաքսային մարմինների կարողությունները, որոնք առաջնահերթ պետք է ուղղվեն ստվերային շրջանառությունների բացահայտմանը, ոիսկային տնտեսավարող սուբյեկտների մոտ հարկային հսկողական ամբողջ գործիքակազմի կիրառմանը և մաքսային հսկողության խստացմանը: Չուզահեռաբար կիրականացվեն համապատասխան միջոցառումներ՝ հարկային և մաքսային հանցագործությունների կանխարգելման, դրանց խափանման և բացահայտման ցուցանիշների, ինչպես նաև պատասխանատվության կիրառման թափանցիկության բարձրացման ուղղությամբ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է կրծատել տնտեսության ստվերային հատվածը՝ ամրապնդելով երկրի տնտեսական անվտանգությունը, ավելացնել պետական բյուջեի հարկային եկամուտները, ինչպես նաև բարձրացնել հարկային և մաքսային վարչարարության արդյունավետությունն ու ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի գործունեության թափանցիկությունը¹:

Այս առումով խնդիր է դրվում վերլուծական կարողությունների և եկեկտրոնային կառավարման համակարգի բարելավմամբ բացահայտել ոիսկային հարկ վճարողներին ու կատարված իրավախախումները, հարկային ներուժը, վարչական հսկողությունն ուղղել ոիսկային հարկ վճարողներին կամ ոլորտներին: Միաժամանակ՝ ենթադրվում է, որ վերլուծական դիտարկումների կենտրոնում են լինելու և աննկատ հսկողություն է իրականացվելու այն ոլորտներում, որտեղ հարկման դրույքաշափերի նվազման կամ այլ արտոնությունների տրամադրման ուղղությամբ հարկային քաղաքականության փոփոխություններ են տեղի ունեցել՝ այդ ոլորտներում աշխատանքները կենտրոնացնելով ստվերային շրջանառությունների բացահայտման, բիզնեսի տրոհման, ազրեսիվ հարկային ծրագրավորման և սահմանված արտոնությունները չարաշահելու դեպքերի բացահայտման վրա:

Այս խնդիրների լուծման համար նախատեսվում են վարչարարական միջոցառումներ, որոնք կարձաժամկետ հատվածում նպատակառուղղված են ստվերի կրծատմանը, հարկային եկամուտների գծով լրացուցիչ մուտքերի ապահովմանը, ոիսկերի կառավարման համակարգի կատարելագործմանն ու վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Ակնկալվում է, որ ծրագրված աշխատանքների հետևողական իրականացման արդյունքում երկարաժամկետ հատվածում կամրապնդվի հարկ վճարողների ինքնագնահատման համակարգը, կաշխուժանա հանրային հսկողությունը և կբարձրանա վստահությունը ՊԵԿ-ի գործունեության նկատմամբ, հարկեր չվճարելը կդառնա ոչ շահավետ²:

Բացի վերոնշյալներից հարկային ու մաքսային գործունեության համար կարևորվում են թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, որոնք ներառված են նաև ՀՀ կառավարության N 1141-Ն որոշման մեջ, քանզի այն դարձել է կարևորագործ և առանցքային հարց ՀՀ-ում³: Հետևաբար թափանցիկ և հաշվետվու կառավարման համակազի ձևավորման համար անհրաժեշտ է տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները

- տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի ու ժամկետների հստակեցումը, դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումը,
- պետական մարմիններում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակումը և համապատասխան փաստաթղթերում վերջիններին գործառությունների ամրագրումը,
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտության դեպքում լրացումների և փոփոխությունների կատարումը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին,

¹ <http://armef.com/hy/news/meknabanutyun/cragri-irakanacum/>

² <http://armef.com/hy/news/meknabanutyun/cragri-irakanacum/>

³ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 2015 թվականի սեպտեմբեր, N 1141-Ն:

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակումը:
- Հանրությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման նոր գործիքներ ներդնելը:
- Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է նաև բարձրացնել իշխանության մարմինների և հանրային ինստիտուտների գործունեության թափանցիկությունը: Այս նպատակով իրականացվելիք միջոցառումներն ընդգրկելու են հետևյալները՝
- պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցների մշակումը,
- պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման՝ հանրության համար հասկանալի և վստահելի համակարգի գործարկումը,
- պետական ծառայության թափուր պաշտոնների մեծ մասը մրցութային կարգով լրացնելն ապահովելը և թափուր պաշտոնների լրացման գործընթացը համակարգող և մշտադիտարկում իրականացնող իրավասու մարմին նշանակելը,
- իրականացված աշխատանքների, գործունեության արդյունքների, այդ թվում՝ ֆինանսական գործառնությունների վերաբերյալ պարբերական հաշվետվությունների իրապարակումն ապահովելը,
- քաղաքական որոշումներ ընդունողների գործունեության իրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանումը,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող երևույթների ու խնդիրների վերաբերյալ հանրությանն ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն տրամադրող կառուցակարգերի մշակումը:

Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման կարևոր նախադրյալներից է նաև ֆինանսական թափանցիկության ավելացումը:

Այս նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- ՀՀ պետական բյուջեի մշտադիտարկման կառուցակարգերի կատարելագործումը.
- անկախ առողջիւնի համակարգի զարգացումը.
- առողջիւրական եզրակացությունների իրապարակայնության մեծացումը:

Կատարված հետազոտությունները թույլ են տալիս կատարելու ստորև ներկայացվող եզրակացություններն ու առաջարկությունները, որոնց համար առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

- Հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացումը. հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ու ատեսավորման չափանիշների ներդրումը, որը կնպաստի նրանց մասնագիտական կարողությունների բարձրացմանը: Ստուգում իրականացնող աշխատակիցներին օժանդակելու նպատակով անհրաժեշտ է մշակել ստորագրումների և ընթացիկ հսկողության այլ գործիքների իրականացմանն օժանդակող ուղեցույցներ, այդ թվում՝ անուղղակի եղանակով հարկային պարտավորությունների հաշվարկման և չափագրումների իրականացման միասնական ստանդարտների վերաբերյալ:
- Անհրաժեշտ է ներդնել ներքին հսկողության և առողջիւնի խստացում՝ ուղղված կոռուպցիոն ու հովանավորչության դեպքերի և ոիսվերի բացահայտմանը. եթե կոռուպցիոն ոիսվերի նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվի հարկային և մաքսային ծառայողների լայն ընդգրկուն ռոտացիաներ, կիստացվի վերահսկողությունը հարկային և մաքսային ծառայողների գործունեության նկատմամբ, ապա նրանց վերաբերյալ բողոքները կամ ընդունած վարչական ակտերի անվավեր ճանաչման բոլոր դեպքերը կդառնան ծառայողական քննության առարկա:
- Անհրաժեշտ է մեծացնել տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների շրջանակը, այսինքն՝ նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնել, ինչն էլ կնպաստի տնտեսավարող սուբյեկտ-

ների հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը և անզգուշությամբ կատարվող իրավախախումների կանխարգելմանն ու հարկային եկամուտների սահուն և կանխատեսելի հավաքագրմանը:

- Անհրաժեշտ է ներդնել հարկային մարմնի գործունեության արդյունքների վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման գործիքներ: Օրինակ՝ հարկային և մաքսային մարմինների իրականացրած վարչարարության արդյունքները տեղադրել այդ մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերում, և պարբերաբար հրապարկել համակարգի վարչարարության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները և ՊԵԿ-ի գործունեության տարեկան հաշվետվությունները:
- Անհրաժեշտ է հեռուստատեսությամբ և ռադիոյով կազմակերպել հաղորդումներ, որոնց միջոցով հանրությանը պարբերաբար իրազեկել բացահայտված հարկային իրավախախումների, կիրառված պատասխանատվության միջոցների, ինչպես նաև հարկային ու մաքսային բնագավառներում միջազգային նորությունների վերաբերյալ:
- Անհրաժեշտ է մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավում, մոտիվացիոն համակարգերի կիրառում: Առավել կարևոր է հարկային և մաքսային մարմնի աշխատակիցների ճիշտ մոտիվացումն ու խրախուսումը, և քատ այդմ էլ կարող են նվազեցվել կոռուպցիոն ռիսկերը: Օրինակ՝ նյութական խրախուսման ժամանակ նպատակահարմար կլինի հաշվի առնել նաև տվյալ աշխատակցի աշխատանքային ստորաբաժանումը և մասնագիտական պատրաստվածությունը: Հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության գնահատման ժամանակ օգտակար կլինի հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են մեծ լարվածությամբ ու կատարողականության բարձր ցուցանիշներ ապահովելու պայմաններում աշխատելու ունակությունը և այլն:
- Նպատակահարմար կլինի հստակեցնել հարկ վճարողների և հարկման օբյեկտների հաշվառման համակարգը:
- Ցանկալի է պարզեցնել հարկային օրենսդրությունը և վերացնել տարբնթերցումներն ու հակասությունները:
- Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ՝ ուղղված հարկային և մաքսային օրենսդրության կիրառման մեթոդական բազայի ստեղծմանը, գործողությունների կատարելագործմանն ու հնարավորինս պարզեցմանը, հարկային մարմինների կողմից նախատեսվող և կատարված փոփոխությունների մասին հարկատունների օպերատիվ իրազեկման վերաբերյալ:
- Հարկային վարչարարության բարելավման նպատակով կարևոր նշանակություն կունենան փաստաթղթաշրջանառության շարունակական կրճատումը և թափանցիկության ապահովումը, ինչպես նաև խոշոր հարկատունների հանդեպ առավել ուշադիր ու անաշառ աշխատանքը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ծավալների մեծացումը և հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացումն ու հարկային համակարգում աշխատողների թվի կրճատումը:

Ամփոփելով այս ամենը կարելի է փաստել, որ ՀՀ-ում հարկային և մաքսային մարմինների թափանցիկության և հաշվետվողականության ապահովման համար անհրաժեշտ է լուծել վերոնշյալ հիմնախնդիրները:

ՀՅ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱԹՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՇՈՒԾԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԿԱՏԵՐՁԱՆ

*ՀՀ Ա. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Տնտեսվարման ներկա փուլում հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը հանդիսանում է պետության կարևորագույն խնդիրներից մեկը, ինչի լուծումը հնարավորություն կտա ձևավորել ժամանակակից ու տնտեսության ներկայիս իրավիճակին համապատասխանող մրցունակ հարկային և մաքսային համակարգ։ Կիրառելով ճիշտ քաղաքականություն՝ այն կվերածվի հզոր տնտեսական լծակի, որի միջոցով կապահովվի ինչպես պետության համար ցանկալի եկամուտների մակարդակ, այնպես էլ տնտեսության կայուն զարգացման բարենպաստ պայմաններ։

Բանայի բառեր. Թափանցիկություն, հաշվետվողականություն, տնտեսության կայուն զարգացում, ստվերային տնտեսություն, կորուպցիա, հարկային վարչարարություն, մաքսային վարչարարություն, քարենպաստ տնտեսական պայմաններ

ПУТИ ОБЕСПЕЧЕНИЯ ПРОЗРАЧНОСТИ И ПОДОТЧЕТНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ НАЛОГОВЫХ И ТАМОЖЕННЫХ ОРГАНОВ В РА

ШУШАН САСУНИКОВНА АСАТРЯН

младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

На современном этапе хозяйствования обеспечение прозрачности и подотчетности деятельности налоговых и таможенных органов является одной из важнейших задач государства, решение которой позволит сформировать конкурентоспособную и соответствующую нынешней ситуации налоговую и таможенную системы. При правильном применении политики это превратится в мощный экономический рычаг, с помощью которого могут быть обеспечены как желаемый для государства уровень доходов, так и благоприятные условия для устойчивого развития экономики.

Ключевые слова: прозрачность, подотчетность, устойчивое развитие экономики, теневая экономика, коррупция, налоговое администрирование, благоприятные экономические условия.

THE WAYS OF PROVIDING TRANSPARENCY AND ACCOUNTABILITY OF THE ACTIVITIES OF TAX AND CUSTOMS AUTHORITIES IN THE RA

SHUSHAN SASUNIK ASATRYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

At the current stage of economic activities ensuring the transparency and accountability of the activities of tax and customs bodies and/or authorities is one of the most important objectives of the government, the and addressing these issues would allow forming a competitive tax and customs system in line with the current economic situation. With the application of the right policy, it will turn into a powerful economic lever, through which both the level of income desired by the state and favorable conditions for the sustainable development of the economy can be ensured.

Keywords: Transparency, accountability, sustainable development, shadow economy, corruption, tax administration, favorable economic conditions